ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/27

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Տիգրան Գալստյան Վանուշի Ա/Ձ-ի (պետական հաշվառման համար 16.01218) ,

քննելով ՀՀ Արագածոտնի մարզի «Օշականի Գայանե մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ-ԱՄ-ԳԱՅԱՆԵ-ՄՄ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Տիգրան Գալստյան Վանուշի Ա/Ձ-ի կողմից 05.05.2021թ. ներկայացված (06.05.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/27 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>Տիգրան Գալստյան Վանուշի Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Տիգրան Գալստյան Վանուշի Ա/Ձ-ն (հետայսու նաև՝ Մասնակից) ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Ս/թ. ապրիլի 27-ին ՀՀ Արագածոտնի մարզի Օշականի Գայանե մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից հայտարարված ՀՀ-ԱՄ-ԳԱՅԱՆԵ-ՄՄ-ԳՀԱՊՁԲ-21/01 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել Տիգրաև Գալստյան Վանուշի ԱՁ-ն,

որի հայտը մերժվել է արձանագրելով ծրարի վրա դրվող ստորագրությունների բացակայություն: Սակայն ներկայացնում ենք ս/թ. ապրիլի 27-ին տեղի ունեցած բացման նիստի ընթացքը, մասնավորապես.

1) Ես՝ անհատ ձեռնարկատեր Տիգրան Գալստյանս, ս/թ. ապրիլի 27-ին ժամը 10.58 րոպե գտնվել եմ Օշականի Գայանե մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի մուտքի մոտ և բացահայտել եմ, որ մուտքի դուռը փակ է, փակ էր նաև 2-րդ մուտքը: Երկարատև սեղմել եմ դռան զանգի կոճակը, սպասել եմ ավելի քան 3 րոպե, որից հետո անձնական կապերով գտել եմ ՀՈԱԿ-ի տնտեսվարի հեռախոսահամարը, ժամը 11.03 րոպե նա ևս չի պատասխանել իմ հեռախոսազանգին, ապա թակել եմ պատուհանի ապակին: Ժամը 11.05 րոպե դռնապանը բացել է դուռը, ես մտել եմ նիստի սենյակ: Դռնապանը հանձնաժողովի ներկայությամբ փաստել է, որ ինքը գտնվել է պետքարանում և չի լսել դռան թակոցը: Տնօրինությունը փաստեց նաև, որ դռան զանգը չի աշխատում: Նիստի սենյակում նստեցի համակարգողի կողքի ազատ աթոռին, դրեցի իմ հայտի ծրարը սեղանին ու հանելով գրիչս սկսեցի ստորագրել ծրարը, որպեսզի հանձնեմ համակարգողին: Վերջինս այդ պահին բարձրաձայնեց, որ ես ուշացել եմ նիստից, իրավունք չունեմ մասնակցելու նիստին, ինչպես նաև ներկայացրել եմ անստորագիր ծրար: Սակայն ես փաստում եմ, որ անստորագիր ծրար չեմ ներկայացրել և համակարգողին գրանցելու եմ ներկայացրել արդեն ստորագրած ծրար: Նշեմ, որ ներկայումս իմ հայտի ծրարը գտնվում է հանձնաժողովի մոտ ստորագրված և հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

2) Խնդրում եմ հաշվի առնել, որ ընթացակարգի հրավերում և գրանցամատյանում նշված է եղել Վոլոդյա Գալստյան համակարգողի անունը, սակայն նիստը փաստացի համակարգել է այլ անձ մի երիտասարդ աղջիկ:

Այսպիսով, մենք փաստում ենք, որ ՀՀ-ԱՄ-ԳԱՅԱՆԵ-ՄՄ-ԳՀԱՊՁԲ-21/01 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ որոշվել է մերժել Տիգրան Գալստյան Վանուշի ԱՁ-ի հայտը հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով, ինչը չի համապատասխանում իրականությանը:

Խնդրում ենք հաշվի առնել, որ փաստացի խաթարվել է իմ իրավունքը մասնակցելու հայտերի բացման նիստին՝ ինձ խոչընդոտելով շենք մուտք գործել, խախտվել է օրենքով ամրագրված հավասար մասնակցության իրավունքը, ինչպես նաև պետությունը զրկվել է նվազագույն գնով ապրանք ձեռք բերելու հնարավորությունից:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Խախտվել են ՀՀ գնումների մասին օրենքի Հոդված 7-ի կետ 1-ի, Հոդված 34-ի

43-րդ կետի պահանջները»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Մասնակիցը խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզի Օշականի Գայանե մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից հայտարարված ՀՀ-ԱՄ-ԳԱՅԱՆԵ-ՄՄ-ԳՀԱՊՁԲ-21/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստից սկսած բոլոր որոշումները, ինչպես նաև պայմանագիր կնքելու որոշումը և ընթացակարգում բացել և ներգրավել նաև Տիգրան Գալստյան Վանուշի ԱՁ -ի կողմից ներկայացված հայտի ծրարը:

Ի լրումն բողոքի Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ Գնումների օրենքի հոդված 30-ի 5-րդ կետի հրավերի պահանջների՝ չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին, ինչը չի կատարվել, փոխարենը ոչ պատշաճ ձևով օրեր անց անցանոթ անձի կողմից փոխանցվել է ծրարը ինձ, ինձ պատկանող Ծիծեռնակ խանութի աշխատակցի մոտ թողնելով այն:

Խնդրում եմ հարկ լինելու դեպքում ծրարը ուղարկել փորձաքննության, ինչը հնարավորություն կտա պարզելու կոնկրետ որ օրն է այն եղել ստորագրված:

Ինչպես ներկայացրել էի իմ բողոքում ընթացակարգի հրավերում և գրանցամատյանում նշված է եղել Վոլոդյա Գալստյան համակարգողի անունը, սակայն նիստը փաստացի համակարգել է այլ անձ մի երիտասարդ աղջիկ: Կարծում եմ, որ նա գնումների որակավորում չունի և այդ հանգամանքը ևս խնդրում եմ պարզել:

Այսպիսով, ես պնդում եմ, որ փաստացի խաթարվել է իմ իրավունքը մասնակցելու հայտերի բացման նիստին ինձ խոչընդոտելով շենք մուտք գործել, խախտվել է օրենքով ամրագրված հավասար մասնակցության իրավունքը, ինչպես նաև պետությունը զրկվել նվազագույն գնով ապրանք ձեռք բերելու հնարավորությունից:

Միաժամանակ, որպես իմ բողոքի լրացում, պահանջում եմ բողոք քննող մարմնից.

ա/ ճանաչել ոչ իրավաչափ ՀՀ-ԱՄ-ԳԱՅԱՆԵ-ՄՄ-ԳՀԱՊՁԲ-21/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները,

բ/ անվավեր ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզի Օշականի Գայանե մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից հայտարարված ՀՀ-ԱՄ-ԳԱՅԱՆԵ-ՄՄ-ԳՀԱՊՁԲ-21/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստից սկսած բոլոր որոշումները, ինչպես նաև պայմանագիր կնքելու որոշումը,

գ/ ընթացակարգում բացել և ներգրավել նաև Տիգրան Գալստյան Վանուշի ԱՁ-ի կողմից ներկայացված հայտի ծրարը:

Կից ներկայացնում եմ իմ աշխատակցի մոտ ծրարը թողնելու տեսագրությունները, որը կատարվել է խանութի տեսահսկող սարքով: Խնդրում եմ ուշադրություն դարձնել, որ ծրարը փոխանցելուց կադրում երևում է, որ այն բացված է»:

Տիգրան Գալստյան Վանուշի Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/27 բողոքի քննության նպատակով 11.05.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը և պնդել է բողոքը:

2. <u>ՀՀ Արագածոտնի մարզի «Օշականի Գայանե մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ Արագածոտնի մարզի «Օշականի Գայանե մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում գտնվող ԳԲՔԱ-ՆԳ-2021/27 ծածկագրով գործի քննության անհրաժեշտությունից ելնելով, ցանկանում եմ հայտնել, որ «Օշականի Գայանե մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ԳԱՅԱՆԵ-ՄՄ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը չի տեսաձայնագրվել կամ ձայնագրվել, մանկապարտեզի կողմից համապատասխան տեսաձայնագրող սարքերի բացակայության պատճառով:

Ելնելով գործի քննության անհրաժեշտությունից՝ ցանկանում եմ տեղեկացնել, որ ապրիլի 27-ին կայացած «ՀՀ-ԱՄ-ԳԱՅԱՆԵ-ՄՄ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստին նախապես հայտ էին ներկայացրել երեք մասնակից՝ «Զեյթուն Սվիթ» ՍՊԸ, «ԱՐԹՈՒՐ ԵՎ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ, «ԱՐՏԱԿՇԻՆ» ՍՊԸ-ները: Վերջին մասնակիցը ներկայացել և գրանցվել է ժամը 10-ն անց 58 րոպեին: Նիստին ներկա է եղել միայն «ԱՐՏԱԿՇԻՆ» ՍՊԸ-ն, մասնակցի ներկայությամբ արձանագրվել և փաստվել է, որ «Զեյթուն Սվիթ» ՍՊԸ-ի ծրարը ստորագրված չէ և մերժվել է համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի: Ուղիղ ժամը 11:00-ին բացվել են ընթացակարգի պահանջները բավարարող երկու ծրարները «ԱՐԹՈՒՐ ԵՎ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ, «ԱՐՏԱԿՇԻՆ» ՍՊԸ, արձանագրվել դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Տիգրան Վանուշի Գալստյան ԱՁ-ի տնօրեն Տիգրան Գալստյանը բացման նիստին

ներկայացել է ուշացած, սակայն հիմք ընդունելով, որ մանկապարտեզի մուտքի դռները անվտանգության նկատառումներով մշտապես փակ են լինում և բացվել են բոպեներ անց, զանգի անսարքությամբ պայմանավորված, ո'չ հանձնաժողովի, ո'չ ներկա մասնակցի կողմից որևէ խոչընդոտ չեղավ նրա մասնակցությանը:

Չխախտելով Տիգրան Վանուշի Գալստյան ԱՁ-ի իրավունքները և օրենքով յուրաքանչյուրի մասնակցության հավասար իրավունքը՝ վերջինիս հնարավորություն ընձեռնվեց մասնակցելու նիստին, նրա ներկայացրած ծրարը իր կողմից դրվեց սեղանին, որտեղ առկա էին արդեն իսկ երկու բացված և մեկ մերժված ծրարները: Նրա ուշանալու հանգամանքը արդարացվելուց հետո համակարգողը վերցրել է դրված ծրարը գրանցելու նպատակով, ստուգելով ծրարի համապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին, արձանագրեց, որ Տիգրան Վանուշի Գալստյան ԱՁ-ի կողմից ներկայացված ծրարը ստորագրված չէ վերջինիս կողմից, ինչը հանդիսանում է մերժման հիմք: Հաջորդ պահին Տիգրան Վանուշի Գալստյան ԱՁ-ի տնօրեն Տիգրան Գալստյանը վերցնելով իր նախապես անստորագիր ծրարը՝ ստորագրեց սեղանին դրված գրիչով, որպեսզի այդ կերպ կրկին ներկայացնի, սակայն հայտի մերժումը մնաց անփոփոխ: Ցանկանում եմ տեղեկացնել, որ Տիգրան Վանուշի Գալստյան ԱՁ-ի տնօրեն Տիգրան Գալստյանը այդ հարցի շուրջ վեճ առաջացնելով մեկ ժամից ավելի խոչընդոտել է բացման նիստի օրակարգին՝ փորձելով իր ծրարը ներկայացնել որպես ՀՀ գնումների մասին օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ կետին բավարարող:

Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի N 2 արձանագրությամբ մերժվել են Տիգրան Գալստյան ԱՁ-ի և «Զեյթուն Սվիթ» ՍՊԸ-ի հայտերը՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի:

Մենք պահպանելով պայմանագիր կնքելու որոշման հրապարակմանը հաջորդող 5 օրացույցային օր անգործության ժամկետը (2021-04-28 -ից մինչև 2021-05-03)՝ կնքել ենք պայմանագիր իրական շահառու հանդիսացող երկու մասնակցի հետ 2021թ. մայիսի 6-ին:

Հարգելի՝ պարոն Ներսիսյան խնդրում ենք ծագած բողոքի քննությանը տալ համապատասխան օրինական լուծում, որպեսզի չխախտվի ընթացակարգի հաղթող մասնակիցների իրավունքները»

Ի լրումն վերը նշված դիրքորոշման Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան այն հարցադրմանը, թե ինչո՞ւ է գրանցամատյանում նշված Վ.Գալստյան, սակայն նիստին ներկա է եղել այլ անձ, ցանկանում եմ տեղեձկացնել, որ դա

պայմանավորված է եղել համավարակի տարածման ռիսկերի կանխմամբ: Համակարգողի ինքնազգացողության կտրուկ անկմամբ պայմանվորված (ջերմություն, թուլություն 7 covid19 բնորոշ այլ ախտանիշներ) և գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը պահպանելու համար ապրիլի 27-ի նիստին ներկայացել է կազմակերպության մեկ այլ աշխատակից»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/27 բողոքի քննության նպատակով 11.05.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/27 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/27 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Արագածոտնի մարզի «Օշականի Գայանե մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ-ԱՄ-ԳԱՅԱՆԵ-ՄՄ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել Տիգրան Վանուշի Գալստյան ԱՁ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Տիգրան Վանուշի Գալստյան ԱՁ-ի կողմից ներկայացված ծրարի վրա բացակայում է այն ներկայացնողի կամ վերջինիս լիազորած անձի ստորագրությունը: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի՝ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը:

Համաձայն նույն հոդվածի 3-րդ մասի՝ սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝ պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման

վայրը (հասցեն), մրցույթի ծածկագիրը, «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

Համաձայն նույն հոդվածի 5-րդ մասի՝ սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է Տիգրան Գալստյան Վանուշի Ա/Ձ-ի հայտը մերժել, իսկ ներկայացված ծրարը նույնությամբ՝ առանց բացելու, վերադարձնել մասնակցին:

3. ՀՀ Արագածոտնի մարզի «Օշականի Գայանե մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ-ԱՄ-ԳԱՅԱՆԵ-ՄՄ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Տիգրան Գալստյան Վանուշի Ա/Ձ-ի կողմից բողոք է ներկայացվել 05.05.2021թ.(բողոքը վարույթ է ընդունվել 06.05.2021թ.), որով վերջինս վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստից սկսած բոլոր որոշումները, ինչպես նաև՝ պայմանագիր կնքելու որոշումը:

4. Պատվիրատուի կողմից 28.04.2021թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5. Պատվիրատուի կողմից 06.05.2021թ. տեղեկագրում հրապարակվել է Ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարություն:

<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Տիգրան Գալստյան Վանուշի Ա/Ձ-ի 05.05.2021թ. բողոքը և լրացումը՝ կից նյութերով, ՀՀ Արագածոտնի մարզի «Օշականի Գայանե մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1.***<u>Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին</u>*** ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2.***Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու <u>հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:</u> <u>Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:</u>***

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: ***<u>Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն</u>***

<u>առնվազն հինգ օրացուցային օր է:</u>

(…)

5. ***<u>Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:</u>*** Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առոչինչ է:

(…)

<u>Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:</u>

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

1. եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

2. եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Այսպես, ՀՀ Արագածոտնի մարզի «Օշականի Գայանե մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ-ԱՄ-ԳԱՅԱՆԵ-ՄՄ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել Տիգրան Վանուշի Գալստյան ԱՁ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Տիգրան Վանուշի Գալստյան ԱՁ-ի կողմից ներկայացված ծրարի վրա բացակայում է այն ներկայացնողի կամ վերջինիս լիազորած անձի ստորագրությունը: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի՝ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա

համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը:

Համաձայն նույն հոդվածի 3-րդ մասի՝ սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝ պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն), մրցույթի ծածկագիրը, «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

Համաձայն նույն հոդվածի 5-րդ մասի՝ սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է Տիգրան Գալստյան Վանուշի Ա/Ձ-ի հայտը մերժել, իսկ ներկայացված ծրարը նույնությամբ՝ առանց բացելու, վերադարձնել մասնակցին:

ՀՀ Արագածոտնի մարզի «Օշականի Գայանե մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ-ԱՄ-ԳԱՅԱՆԵ-ՄՄ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Տիգրան Գալստյան Վանուշի Ա/Ձ-ի կողմից բողոք է ներկայացվել 05.05.2021թ., որով վերջինս վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստից սկսած բոլոր որոշումները, ինչպես նաև՝ պայմանագիր կնքելու որոշումը:

Պատվիրատուի կողմից 28.04.2021թ. տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Պատվիրատուի կողմից 06.05.2021թ. տեղեկագրում հրապարակվել է Ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարություն:

Այսպիսով՝ անդրադառնալով բողոքաբերի կողմից մասնավորապես բողոքով վկայակոչված հետևյալ պահանջին՝ *անվավեր ճանաչել պայմանագիր կնքելու որոշումը*՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1.***Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին*** ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2.***Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:***

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: ***Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:***

(…)

5. ***Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:*** Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առոչինչ է:

(…)

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, ***<u>բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:</u>***

Հիմք ընդունելով վերը նշված իրավակարգավորումները՝ արձանագրում եմ, որ ՀՀ Արագածոտնի մարզի «Օշականի Գայանե մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը անգործության ժամկետի ավարտից հետո, քանի որ անգործության ժամկետում որևէ մասնակից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկել պայմանագիր կնքելու մասին որոշումը, «ՀՀ-ԱՄ-ԳԱՅԱՆԵ-ՄՄ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում, համաձայն Պատվիրատուի կողմից 06.05.2021թ. տեղեկագրում հրապարակված կնքված պայմանագրի մասին հայտարարության, կնքել է պայմանագիր, որպիսի պայմաններում, համաձայն Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետի, ***<u>Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննության արդյունքում պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին որոշում կայացնելու իրավասությամբ օժտված չէ, հետևաբար բողոքը ենթակա է մերժման:</u>***

Միևնույն ժամանակ անդրադառնալով բողոքաբերի կողմից բողոքով ներկայացված փաստարկներին՝ սույն որոշման շրջանակներում հարկ եմ համարում արձանագրել բողոքի քննության արդյունքում արձանագրված հետևյալ խախտումները.

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Մասնակիցը ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«*Փաստում եմ, որ անստորագիր ծրար չեմ ներկայացրել և համակարգողին գրանցելու եմ ներկայացրել արդեն ստորագրած ծրար: Նշեմ, որ ներկայումս իմ հայտի ծրարը գտնվում է հանձնաժողովի մոտ ստորագրված և հրավերով սահմանված պահանջներին համապատասխան*»:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ ԳԲՔԱ-ՆԳ-2021/27 բողոքի շրջանակներում Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«*Համակարգողը վերցրել է Տիգրան Վանուշի Գալստյան ԱՁ-ի ծրարը գրանցելու նպատակով, սակայն ստուգելով ծրարի համապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին, արձանագրեց, որ Տիգրան Վանուշի Գալստյան ԱՁ-ի կողմից ներկայացված ծրարը ստորագրված չէ վերջինիս կողմից, ինչը հանդիսանում է մերժման հիմք: Հաջորդ պահին Տիգրան Վանուշի Գալստյան ԱՁ-ի տնօրեն Տիգրան Գալստյանը վերցնելով իր նախապես անստորագիր ծրարը՝ ստորագրեց սեղանին դրված գրիչով, որպեսզի այդ կերպ կրկին ներկայացնի, սակայն հայտի մերժումը մնաց անփոփոխ*»:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, կողմերի կողմից վկայակոչված փաստարկները, այն է՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտը Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջով մերժելու իրավաչափությունն արձանագրելու նպատակով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 26-րդ կետի 5-րդ ենթակետը, 13.05.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/3744-2020 գրությամբ դիմել է ՀՀ Արագածոտնի մարզի «Օշականի Գայանե մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին՝ խնդրելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում գտնվող ԳԲՔԱ-ՆԳ-2021/27 ծածկագրով գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ տրամադրել «ՀՀ-ԱՄ-ԳԱՅԱՆԵ-ՄՄ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի վերաբերյալ տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Օշականի Գայանե մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 17.05.2021թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ Արագածոտնի մարզի «Օշականի Գայանե մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից «ՀՀ-ԱՄ-ԳԱՅԱՆԵ-ՄՄ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստը չի տեսաձայնագրվել կամ ձայնագրվել՝ մանկապարտեզի կողմից համապատասխան տեսաձայնագրող սարքերի բացակայության պատճառով:

Մինչդեռ Կարգի 26-րդ կետի կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են***, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված իմպերատիվ պահանջը, այն է՝ չի տեսաձայնագրվել կամ ձայնագրվել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի տեսաձայնագրության կամ ձայնագրության բացակայության պայմաններում հնարավոր չէ հաստատել կամ հերքել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Տիգրան Գալստյան Վանուշի Ա/Ձ-ի

կողմից ներկայացված հայտը Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջով մերժելու մասին որոշման իրավաչափությունը:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը ***հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին,*** մինչդեռ Պատվիրատուի կողմից խախտվել է նշված կարգավորմամբ սահմանված պահանջը, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, Ընթացակարգի հայտերի բացման նիստում, որը տեղի է ունեցել 27.04.2021թ. ժամը 11:00-ին, Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն մերժելով Տիգրան Գալստյան Վանուշի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը, հայտերի բացման նիստում նույնությամբ չի վերադարձրել Տիգրան Գալստյան Վանուշի Ա/Ձ-ին, այլև բողոքի քննության ընթացքում բողոքաբերի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրված տեսաձայնագրությունների համաձայն՝ վերադարձրել է օրեր անց՝ 07.05.2021թ.-ին, երբ արդեն սույն գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված էր բողոք:

Անդրադառնալով բողոքաբերի կողմից ներկայացված հետևյալ դիտարկմանը. «*Ընթացակարգի հրավերում և գրանցամատյանում նշված է եղել Վոլոդյա Գալստյան համակարգողի անունը, սակայն նիստը փաստացի համակարգել է այլ անձ՝ մի երիտասարդ աղջիկ: Կարծում եմ, որ նա գնումների որակավորում չունի և այդ հանգամանքը ևս խնդրում եմ պարզել»,* ապա արձանագրում եմ, որ սույն մասով Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«*Ի պատասխան այն հարցադրմանը, թե ինչո՞ւ է գրանցամատյանում նշված Վ.Գալստյան, սակայն նիստին ներկա է եղել այլ անձ, ցանկանում եմ տեղեկացնել, որ դա պայմանավորված է եղել համավարակի տարածման ռիսկերի կանխմամբ: Համակարգողի ինքնազգացողության կտրուկ անկմամբ պայմանվորված (ջերմություն, թուլություն 7 covid19 բնորոշ այլ ախտանիշներ) և գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը պահպանելու համար ապրիլի 27-ի նիստին ներկայացել է կազմակերպության մեկ այլ աշխատակից*»:

Այսպիսով՝ անդրադառնալով Պատվիրատուի կողմից վերը նշված դիրքորոշմամբ ներկայացված փաստական հանգամանքին՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Կարգի 7-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ պատվիրատուն գնման ընթացակարգի կազմակերպման սկբնական փուլում նախ և առաջ սահմանում է գնումները համակարգող, որը

պատասխանատու է պատվիրատուի՝ գնումների գործընթացի կազմակերպման և համակարգման համար, եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ, ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին, ինչպես նաև իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները, միաժամանակ Կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվում է, որ ***գնահատող հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:*** Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: ***Հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը*** և հանձնաժողովի առնվազն երկու անդամ:

Այսպիսով՝ վերը նշված կարգավորումը հստակ սահմանում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի իրավազոր նիստի անցկացման պայմանները, մինչդեռ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել վերը նշված իրավակարգավորումներով սահմանված պահանջները:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով գործով առկա այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգի արդյունքում Պատվիրատուի կողմից 06.05.2021թ. կնքվել է պայմանագիր և Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննության արդյունքում պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին որոշում կայացնելու իրավասությամբ օժտված չէ, հետևաբար գտնում եմ, որ Տիգրան Գալստյան Վանուշի Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Տիգրան Գալստյան Վանուշի Ա/Ձ-ի կողմից 05.05.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**